

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Նամակ դրամ եռալիս դրկի հետևեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Redaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն որկուիր եւ յարմար դաստաւ-
ները միայն կը հրատարակուին անող-
ջովին կամ մասամբ:
Խանութեան տոյր 20 սանթիմ. երե-
քէն աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի, փոխարէնը կանխիկ:

ՏԻՐԱՊԵՏՈՂ ՏԱՐՐԸ

Կար ժամանակ մը ուր Եւրոպայի մէջ տիրապետող միակ ուժը հոգեւորականութիւնն էր, որ իրեն արքանեակ ընտրած էր ազնուականութիւնը: Պապը իսկապէս Եւրոպայի գերագոյն վեհապետն էր, որուն առջեւ բոլոր թագաւորները եւ իշխանները խոնարհելու պարտաւոր կը զգային ինքզինքնին: Որովհետեւ իբր բացարձակ ճշմարտութիւն ընդունուած էր թէ հոգին գերազանց է քան մարմինը եւ հոգեւոր իրերու տէրն ու դատաւորն էր Պապը, անոր եւ անոր ստորակարգեալ կղերիկն զէմ ոչ ոք կրնար առհասարակ ըմբոստութիւն մը փորձել կամ մտքէն իսկ անցընել:

Եւրոպայի այդ դրութիւնը շատ աւելի երկար ժամանակ անփոփոխ պիտի չարձանակէր, քան որչափ իրօք տեսնեց, եթէ կղերական դասակարգը իր անչափ ուժին եւ անգերագոյնի ազդեցութեան վստահած չի գործէր անկարագրելի զեղծումներու այն անվերջ շարքը, որ իր անկումը պատրաստեց: Զեղծումները այնքան ակնհայտ, չափազանց եւ բազմաթիւ եղան որ մարդիկ սկսան քիչ քիչ տարակուսիլ հոգեւոր իշխանութեան օրինաւորութեան, պատուաւային ծագումին, եւ անբռնարարիկ սրբութեան վրայ: Կասկածը երթալով մեծցաւ, ընդհանրացաւ եւ վերջապէս վերածուեցաւ սա համոզումին թէ այնքան բարոյական ապակաշտութեամբ վարակուած դասակարգի մը տիրապետութիւնը չէր կրնար օրինաւոր եւ Աստուծոյ հաստատուած ըլլալ եւ թէ հետեւաբար ժողովուրդները պարտական չէին անոր հնազանդիլ: Լուտեր այս համոզումին մեծ յայտարարողն եղաւ եւ տապալից պապական գերիշխանութիւնը զոր փութացին կղերիկն ձեռքէն յափշտակել թագաւոր գլուխներ: Սկսաւ բացարձակ միապետութեան այն շրջանը ուր եւրոպական թագաւորներ եւ այլ վեհապետներ իրենց վերագրեցին այն իշխանութիւնը,

իրաւասութիւնները եւ առանձնաշնորհումները զորս երբեմն Պապերը իւրացուցեր էին:

Ամեն իշխանութիւն Աստուծոյ հաստատուած է՝ սկզբունքին վրայ յենած՝ զորս քրիստոնէական վարդապետութիւնը ընդունած էր, վեհապետները, որոնց իշխան, թագաւոր, դուքս եւն տիտղոսէն անբաժանելի էր «Աստուծոյ կամքով» բացատրութիւնը, ինքզինքնին նուիրելով իրենք իրենք, պատուին եւ ինչքին: Այս տեսութիւնն էր որ ապականեց հիմնապէս բացարձակ միապետութիւնը: Սա իր ազնուականութեան եւ զինուորական արքանեակներով կեդրեց տանջեց ժողովուրդը ծայրագոյն անխղճութեամբ ոտնակոխ ըրաւ ամեն իրաւունք եւ արդարութիւն, պղծեց ամեն սրբութիւն իր շահերուն համար: Ուրովհետեւ տիեզերական բարոյական մը կայ, որուն զէմ չեն կրնար անպատիժ մեղանչել ամենէն զօրաւորներն ալ, բացարձակ միապետութիւնն ալ ինկաւ իբր ռճիրներուն: Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնը ջախջախեց ոչ միայն Ֆրանսայի ալ եւ բոլոր Եւրոպայի ապականած ուժերը, որուն աւերակներուն վրայ կանգնեցաւ սահմանադրական դրութիւնը: Ասոր շնորհիւ բարձրագոյն իշխանութիւնը բաժնուեցաւ վեհապետին ու ժողովուրդին միջեւ, որ իր ներկայացուցիչներուն միջոցաւ մասնակցեցաւ օրէնսդրութեան եւ սկսաւ ելեւմտական եւ ուրիշ գործերու մէջ հսկողութիւն գործ դնել զօրձադիր իշխանութեան վրայ: Օրէնքի առջեւ, առանց դասակարգերու խտրութեան, հաւասարութիւն եւ ամենուն համար խօսելու, գրելու եւ գործելու ազատութիւն յայտարարուեցաւ, թէեւ դժբաղդաբար սին, անգործադրելի բառ մը մնաց Եւրոպայի վրայ զոր ֆրանսական յեղափոխութիւնը զըրած էր իր գրօշակին վրայ: Այս տեսութեան եւ հաւասարութեան հետ:

Ազատութիւնը կը պարունակէր իր մէջ ազատ մրցման սկզբունքը տնտեսական ասպարէզին վրայ, ուր բնականաբար իւրաքանչիւր ոք

պիտի յաջողէր իր այս կամ այն բնական կամ ստացական առաւելութիւններուն եւ դիպուածի նըպաստաւորման չափով, իսկ անոնց մէջ զրկուածներուն անյաջողութիւնը բաժին իյնար: Այսպէս անխուսափելի էր տակաւ երկու որոշ դասակարգերու, յաջողածներու եւ զրկեալներու դասակարգերուն կազմութիւնը, ամեն առաւելութիւն, մենաշնորհ, կեանքի վայելք առաջիններուն եւ ատոնց հակառակը վերջիններուն ճակատագիրը մնալով, որովհետեւ բացարձակ իշխանութիւնը իրապէս իշխանազուն գերդաստաններէն անցեր էր դրամին, դրամատէրին ձեռքը:

Հիմա տիրապետող տարրը դրամն է. իր քով նշանակութիւն չունի ոչ հոգեւորականութիւնը, ոչ ազնուականի արիւնը, որոնք երբեմն միայնակ կը ճնշէին Եւրոպայի վրայ:

Դրամատիրութիւնն ալ ինկաւ անասելի զեղծումներու մէջ: Կը հարստահարէ, կը կեղեքէ այն դասակարգը որ զրկուած է դրամէն, անոր ուժէն, ուստի եւ տկար է: Այս կացութեան ուղղակի հետեւանք են ընկերվարական, անիշխանական եւ ոչնչական վարդապետութիւնները որոնք այսօր լըրջօրէն կը սպառնան բարուբանդ ընել քաղաքակրթեայ մարդկութեան ամէն կարգ ու սարքերը:

Ժամանակ մը դրամատիրական զեղծումները մասնաւորներու գործառնութեանց մէջ կը դիպրէին: Գործաւորի եւ գործատիրոջ միջեւ էր լուրջ անիրաւութիւնը: Սակայն դրամի գործութիւնը, պէտքը եւ հրապոյրը այնքան ընդարձակուեցան որ եւրոպական կառավարութիւններն ալ իրենց գլխէն մինչեւ ոտքը վարակուեցան դրամի, նիւթական շահու աղտոտ, անբարոյականացնող տենջէն: Շահը այսօր դարձած է միակ առանցքը որուն վրայ կը դառնան պետութեան քաղաքականութիւնը, ներքին թէ արտաքին: Այսպէս կրնայ բացատրուիլ որ մինչ տակաւին քաղաք դար առաջ Եւրոպա մարդկութեան մեծագոյն բարոյական շահերուն նախանձախնդիր կերեւէր, իր քով

մարդասիրութիւն, քրիստոնէութիւն եւ արդարութիւն նշանակութիւն ունէին եւ անոնց անունով պատերազմի դաշտը կը դիմէր սուրը ձեռքին մէջ, այժմ այդ նախկին սկզբունքները եւ ասպետական զգացումները կորուսած է: Այս է պատճառը որ Եւրոպա լուրջ հանդուրժեց թուրքին այն վայրագ գործերուն, որոնք Հայաստան եւ Յունաստան մէյմէկ արեան լիճի փոխեցին եւ որոնց կատարումը անկարելի էր ասկէ 20-30 տարի առաջ: Այո՛, այն ատենի Եւրոպայի դեպքաններուն աչքին առջեւ, Կ. Պօլսոյ մէջ անկարելի էր որ թուրք ոստիկանութիւնը հայկական ջարդ մը պատրաստէր:

Երբ արդի ընկերութեան մէջ դրամի իշխանութեան հլու գործիք դարձած են նոյն իսկ կառավարութիւնները եւ անոր հրամանով մարդկութեան ամէն բարոյական շահերը ոտնակոխ կընեն, այդ կը նշանակէ թէ արդի ուժերի զեղծումները հասած են կամ շատ մօտ են հասնելու իրենց քաղաքականութեան, ուրկէ անդին տառապող մարդկութիւնը անվերջ պիտի տեսնէ բարոյական յաղթանակը ամէն գծով: Եւ ապականութեան վրայ: Պատմական օրէնքն այս է, որոշ իրողութիւններով հաստատուած: Եւ Հայութիւնը պիտի տեսնէ այդ մեծ յաղթանակը, զոր մասնաւորապէս իրենք նկատելու իրաւունք պիտի ունենայ՝ եւրոպական շահամոլութեան ուրիշ ամէն զոհերուն հետ:

Յ. Պ.

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻՆ

(Շար. Եւստորի քիւն եւ վերջ)

1898 . . . Ե . . .

«Ամենասիրելի իմ եղբայր Զատուրդին՝ նամակն առինք, ուրախ եղանք որ ողջ առողջ հիւանդանոցէն ազատուեր էք եւ այդպէս ազատ երկրի մէջ օր աստուր կանցունէք: Կը գրես թէ եղթարաֆներ քիւրտ չկայ, Տաճիկ չկայ, թալան, սպառնութիւն չկայ, արեւուդ մատաղ

ախպէր, էդ ինչ նմուշ երկիր է որ Գիւրտու և Տաճիկ չկայ, զիեան ու զուլում չկայ. կարելի է որ դրախտն է էդ տեղեր, իսկ մեր անուշ վաթանը դժոխք. ապա էլ ինչի՞ հին պատմութիւններ, մեր կարգացումներ կասեն թէ դրախտը Հայաստանի մէջն է, ապա էլ ինչի՞ կասեն Բին Գէօլ Ծաղկաւէտ սարերն են դրախտի տեղերը. . . ինչի՞ մըկայ (հիմայ) Բին-Գիօլը Բին-Գան է դարձեր հայու համա .

«Մեր վիճակը թէ կը հարցընես, երթալով կը գէշնայ. Գրաւանցիք-Շաքիբի մարդեր-գաղաթը չեն մնար, հիշ մէկ բան չլիողին մեր գեղ, յըմէնիս տունն էլ թալնեցին, շատերանց էլ ջարդ փշուր կոտորեցին, ախր իտորից առաջ գրեր ենք քեզի իգոնք. էս օրերն էլ հացի սով, թանգութիւն սկսերի նեղել մեզի, ոչ բարով սող մնացինք, երանէկ մեռնողներաց, տղատուն . . . ցանք վար անելու խամար նէ տաւար կայ, նէ գուլթան, էլած խողերն էլ Գրդերը զապթեր են .

«էլ ճար չկայ ապրելու ջան ախպէր, ինչ կանէք արէք, օր մը շուտ մեր կաթովիկոյն, մեր Պատրիարքին էդա թարափի ազատ հայերուն իմաց արէք մեր վիճակ, էլ չենք կանայ քաշել, Մեր ջահէլ ջիւան ազգասէր, յեղադիրականներն ինչ կանեն էդա գեղ (կողմ), չլինի որ ձեռք ձեռաց վրա դրած նստած են . . . ինչ կը մտածեն, ինչ կանեն, ազգասիրութիւն տեղ էդ տգիտ

տիւնիէն չի, թող գան, թող գան, «Մեր կողմերն էլ մէկ թախըմներ կան, կասեն ազգասէր ենք, երկու, երեք գօլ են եղեր. մարդ կասի, աշիւթլը կը կազմեն իւրաւու դիմաց. մէկ թախըմ կասի - «Մենք Հնչակ» ենք, զարնենք կոտորենք, ջարդենք, թափենք. (խօսքով) մեր ճաղեր Խնկիլի Ժալթթալիս են նստեր կը գրեն ու գրեն ու կը մրեն » .

Մէկ թախըմն էլ կասեն, «մենք «Գրօշակ» ենք, խայաստան մենք պիտի ազատենք, մեր ճաղեր Ժընիւ քաղաքն են զապթեր» - կը զարմանամ ախպէր, առանց Հայրենիք ազատելու այդ մարդերը գրօշակ պարզերն ժընիւի մէջ, Մէկ թախըմն էլ կասեն «Մենք «Մարտ» ենք», Ապրիլ չենք, մեր ճողերաց սընօրը Միջերկրական ծովու ջրերն են » .

«Ախպէր էլ ո՞ր մէկն ասեմ. հա՛, աղէկ միտքս եկաւ, մէկ թախըմն էլ կան կողան կասեն թէ - «Մենք «Արմէնիա» ենք, մեր ճոյ քանի տարի է որ Ֆուանգըստանու իրենցի Մարտիկա քաղաք զապթ ու ֆէրման է արեր» . Մենք հիմայ չիւարեր ենք, չենք գիտի որ ո՞ր մասիկ անենք .

«Բնցած օր ազգասէրներու թախըմներ, յըմէն գօլն էլ ժողովուրդ էին մէկտեղ կը վիճաբանէին, էնքան իրարու վրայ պօռացին, մին չեւ որ էլան գեղ իրար գլուխ, տուր որ կուտաս մէկմէկու, աղէկ մը իրարու փետեցին. ճիշդ էդ ժամանակ որ իտոնք իրարու գըլթօլ կը տիէին, պիտէն հաւար

էլաւ թէ «հասէք Շաքիբի մարդերն . . . գիւղի թախըմ տարան» . ինչ կասես ախպէր ջան. մինչեւ որ մեր ազգասէրներ իրարու ետեւէն թախըմ տարան . . . մի քանի մարդերու էլ կոտորեցին . . . էլ գու ձեւ չափ արա՛ ախպէր, մինչեւ ազգասէր, մատուղը հատաւ .

«Չեմ գիտեմ էդա արտասահմանի դիւանց յեղափոխազատէր. ներն էլ էսպէս իրարու գլուխ կը տնփեն թէ ոչ. թէ որ այդպէս է աշխարհներս լոյս .

«Ախ, սիւտը կը վառուի, հոգիս կը մընձրի. Գրդերուց էդ թախըմ տանելու ժամանակ երանի թէ թուփանք մը էնէր իմ ձեռաց մէջ, ես վազէի Գրդերաց դէմ, իմ աղջիկ հալով կամ մեռնէի կամ թախըմ դարձնէի էն գեղս (ժամանակ) թող մեր ջահէլ տղէրներ որչափ կուգէին իրար պատուաւէին սենեակի մէջ, անուններաց պատճառով .

«Այդ այդպէս . . . «Մեր դարտ, մեր ցաւ մեզի հերիք չէր, մէկ թախըմ մարդեր էլ, նըմուշ նըմուշ, թափուր թափուր մարդեր, սեւ երկար հալաւներով, պղնձի ձեւ շափկան գլուխներ ինկեր են մի գեղըմնք կը ֆուտն ու կը քարոզեն մեզի թէ «կաթովիկ դարձէք, ձեզի հաց կուտանք, հալու կուտանք, կազատենք, մեր ճոյ Պապ Հոովմ կը նըստի, Աստուծոյ փոխորդն է շատ սուրբ է և հիւքմի . . . » «Մէկ կարգն էլ կան որ կը քա .

րողեն թէ « փռօտ եղէք, ձեզի Ամիրկա կը տանենք, այնտեղ ազատ աստուրի, կեանք վարէք, փառք փայելէք » . կը զարմանամ ախպէր ջան, էդ մարդեր ինչի՞ Գրդերաց, Տաճիկներաց «Տիրոջ խօսքը» չեն սովորեցներ, գէշ, աղէկ մենք զաթի Գրիստոնեայ ենք .

«Շիւարենք մնացեր, չենք գիտի գլուխներս ինչ քարի վրա դնենք. մեր ազգասէր յեղափոխականները մէկ մէկ կողմ կը քաշեն, կաթովիկ, փռօտ մէկ մէկ կողմ. զաթի (արգէն) Գրդերն ու Օսմանլին գիտես խօ ինչ կանեն .

«Եթ զլիւանի վիշապու բերանի մէջ ենք ինկեր, որ կողմ դառնանք զուլմ ու զարար . . . «Թ . . . խ . . . Ա . . . վ . . . Ն . . . և այլն շատ մը հայ գիւղեր կաթովիկ դարձան. Աշքերնին լոյս մեր տէրտէր-վարդապետներաց . . . Մեր տէրտէրներաց շատեր իրենց օլուղ չօլուղով թողին փախան, աղէկ հովիւ են աղէկ կը պահեն գառները գալլիւրից . . . մկայ մեր եկեղեցին կաթովիկ վարդապետը կը կարգայ . Մեր 100 տարեկան Տէր խաչատուրն է մնացեր, էն էլ շատ ծեր էր, երեւի այդ մահաճով մնաց . Այսչափ դառն տանջանքներ քաշելէ վերջ Տէր խաչատուր նորէն մինչեւ իրիկուն մեզի կասէ թէ «Մեր մեղքիցն է մեր քաշածները, Ա.ժ. մեզի պատժեց մեր մեղաւորութեան պատճառով . . . »

«էս էլ Տէր խաչատուրի խօսքեր . Մարտոյնց խուռնի խեղէն աղջիկ Նազուլին ընցած օր Գրդ .

ՀՆԴՆԱՆՈՒՐ
ԶԻՆԱԹԱՓՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ

(Բ.) (2)

Պէտք էր որ նախ սկսէինք հակիրճ տեղեկութեան մը մէջ քննել, թէ իրապէս կարելի է զինեալ խաղաղութեան ընթացքին առկա ապրիլ .

Անկարելի է մեզ հաւատալ որ խաղաղութիւնը տեւական ենթադրող բաւական միաժամ մարդիկ գտնուին, երբ կը տեսնեն ամեն օր մեծ տէրութիւններն յաւելում մեծ եռանդով իրենց զօրացիւնական թիւն եւ, հետեւաբար, իրենց ապանիւ գործիներու քանակութիւնը, եւ թէ ժողովուրդն (այն աղբիւրն որ, կրկնակի կը կերակրէ զէնքերու ոյժն) խաբելով՝ ա՛լ աւելի կը մօտենանք միշտ գահալէժի եղբն, ուր անխուսափելի գլորումն անլրէպ տեղի պիտի ունենայ, աւա՛ղ, գուցէ շատ մօտեկ ժամանակի մը մէջ . Այնքան դժուար է յարատեւ մնալ զինեալ խաղաղութեան մէջ՝ ինչքան անբնական պիտի լինի ստամոքս, բերան, ակոյղ ունեցող մարդու մը ուտելիք չը փըտըռել և ուտելու փափաք չը զգալ .

Եւ զինեալ խաղաղութեան վիճակը, սակայն, ինքնովին տեսակ մը պատերազմական յարաբերութիւն է, աւելին ասելով՝ իսկական պատերազմ մ'է, ինչու որ, այս՝ երկար տարիներէ ի վեր յայտարարուած և սկսուած սընտեսական պատերազմ մ'է, ուր ամեն օր կը մղուին ուժեղագոյն պայքարներ .

Երկու կամ շատ մը կուսակցութիւններու բաժնուած եւրոպական տէրութիւնք կը հետեւին այս շարժման, եւ, իրարու հաւատարիկ կամ զիրար գերազանցել փափաքելով, մղուած են դէպի ա՛յնպիսի խրոխտ վիճակ մը՝ ուր որոշեալ ժամուն պիտի իյնան ամեն կողմանէ ճակատագրապէս սպառած .

Բայց այս ճակատագրական անտեսական անկումէն առաջ պատերազմի պիտի գոռայ իր բոլոր աղէտներու թափօրով, իրեն անխուսափելի հետեւանք՝ վերջին եւ գերագոյն հարք՝ յուսահատութիւնն ինքնուրու եւ մղուած .

Եւ գիտէ՞ք ինչ պիտի գոյանայ այս պատերազմէն . Ամեն անունք որ մեզ պէս յիսուն տարիներ անցուցած պիտի լինին բանակի մէջ, մեզ պէս վկայ եւ զած պիտի լինին այս վերջին կէս-դարի մէջ տեղի ունեցած պատերազմներուն հաղիւ թէ պիտի կրնան երեւակայել այս պատերազմի տարածութիւնն, սաստկութիւնն, ահաւորութիւնն . Անկէ յառաջանալիք սոսկալի եւ անբարձր մանկի հետեւանքներն, լինի յաղթը ողորդ կամ յաղթողին համար՝ չը պիտի կրնային հաշուիլ .

Ուրեմն անկարելի է, որ մի կառավարութիւն կամ ուրիշ մի ժողովուրդ ինչ որ ալ լինի իր հայրենասիրութիւնն կամ հպարտութիւնն՝ այժմու զինման ենթարկուելով եւ այս վտանգաւոր կըրօն տանելով՝ ընդերկար կարենայ գիտնալ. հետեւաբար՝ կամ եւս չը կարենալով գիտնալ ա՛յնքան ահագին եւ անօգուտ զոհողութեանց, ժողովուրդը պիտի մերժէ նպատակ այս ահագին ծախուց, եւ կամ զինու տակ գտնուող զօրաց անհամբերութիւնն եւ

փառասիրութիւնն՝ կամայ ակամայ՝ պիտի մղեն ու քնն կատաղարութիւններն պատրուակ մը փնտռելու պատերազմի յայտարարելու համար. քանզի անոնք, արտաքուստ, ա՛յնքան պիտի նախընտրեն զայն որքան ներքնապէս .

Եւ ուրիշ պատրուակ մը գտնելէ աւելի զիւրին ինչ բան կայ, երկու գինւոր . . . չորս պարզ մարդիկ . . . գիւհապէս մը սխալ քայլն, կրնան ա՛յնքան դիւրաւ վառել հրդեհն, որ չը քաշուի պարզ լուցիկով վառօդի տակաւ մը կրակելու .

Եւ եթէ որեք պատերազմը գոռայ եւրոպայի ուրիշ մէկ կողմը, բոլոր մեծ տէրութիւնք պիտի քուլին անոր մէջ, եւ պիտի հանեն միլիոնաւոր զօրքեր քանդելու եւ աւերելու գործին համար .

Ո՞վ պիտի կրնայ սահմանափակել այս ընդարձակ հրդեհն, ո՞վ պիտի կրնայ անոր դեմ մի անանցանելի շրջանակ կամ սահման . Ո՞վ յայնժամ պիտի կըրնայ առաջացած ողէտներուն եւ սոսկ կուլմներուն մի պայմանաժամ որոշելու . Զի այն որ կ'իյնայ այս մահաշուէն եւ մահացան կուլուի, մէջ՝ ա՛լ յաւիտենապէս չը պիտի վերականգնի .

Արե՛ւ այս երկու նախանձորք ժողովրդոց պատերազմին մէջ, կամ աւելի հաւանօրէն՝ այս եւրոպական ընդհանուր պատերազմին մէջ, վիցէն մինչեւ տասերեք միլիոն զօրք՝ հրով եւ մահով զինուած՝ ոտքի վրայ պիտի լինին, գիրար պիտի փողոտեն եւ, փոխադարձաբար, պիտի ջնջեն եւ քանդեն ա՛յնպէս՝ որ եւրոպայի ամենամեղեկալ կեդրոններն պիտի վնասուին մարդկային սպանողանոցներու, եւ ընդերկար պիտի լինին սուգի եւ արտասուքի կայաններ . . .

Յայնժամ ինչ օգուտ ունին գիտութիւնք, առաջիկութիւն եւ քաղաքակրթութիւն՝ եթէ միմիայն կը ծառայեն մահու եւ աւերման գործին հնազանդ . Միթէ առաջիկութիւնը պիտի հաշուէ թնդանութիւնը գործիքանք եւ հասողութեան վրայ . Եթէ գործիքանք պարտի գերազանցել իրաւունքըն, յայնժամ պէ՛տք է վերադառնալ վայրերի կենաց. եւ հոն թերեւս պէտք պիտի լինէր այնուհետեւ փնտռել ապահովութիւնն եւ ազատութիւնն, վասն զի գէ՛շ հոն չը պիտի գտնուէին եւս քան զեւս կատարելագործուած զէնքեր. հոն չը պիտի լինին զրահանաւոր եւ սօրբիւնաւոր եւ բոլոր այն դժոխային գործիքներն՝ միահամուռ ջախջախելու եւ ճգմիլու համար մարդկային կեանքեր .

Դիւրե՛ւն բան է յուզել պատերազմի հրդեհն, բայց վերջին ինչպէս մարել զայն, այս բանի մէջ, մանաւանդ, աւելի զիւրին է կործանել քան չինել . Անոնք միայն պիտի համարուին մարդկութեան մեծարուած հանճարներն, անոնք միայն պիտի ճանչցուին մեծ մարդեր, որոնք պիտի կրնան յաջողիլ եւրոպան ազատելու այս սոսկալի վըտանգէն . Այսօր մեր հրատարակած քաշի մը տողերն եւս ուղղուած են աղբերու դէկն իրենց ձեռքին մէջ պահող անձանց, այն բարձր անձնաւորութեանց՝ որ կը վարեն եւ կ'առաջնորդեն ժողովուրդներն, եւ որ կը վայելեն անոնց համակրութիւնը .

(Շարունակելի) Ակաթի

գեր փախուցիկն, տարան . . .
«Այն էլ չեմ կարնա գրել ձեռ-
քերս կը գալան, փորտս կը կրտու-
րուի, ճիկէրս կը խաշվի աչքե-
րացս արտասուք կը թափի, այս-
քան էլ գլուխ ծռել ֆըրդին,
ճաճկին, տէրտէրին, վարդապե-
տին, աշխարհականին, սովուն,
տանջանքին, արիւն թալանին էլ
ի՞նչ տանեմ, վերջապէս դեւին, սա-
տանին . . . ադոնք հերիք չէր
հիմայ էլ գլուխ ծռենք կրսնն հը-
ռոցմի Պապին, Սմբերկայի Լու-
թերին երկինք ու գետնին . . .
չեմ, էլ չեմ կարող գրել, կըսպա-
սեմ անհամբեր նամակիս պատաս-
խանին, սիրելի արպէյր» :

Կարօտով քո քոյր
Մանիշակ

Ջգայուն մարդ ես, ուղեղ,
բանականութիւն ունի՞ս, ահա կար-
դա՞ւ ուշի ուշով Մանիշակի՞ նա-
մակը, կարգա հինգերորդը և
տաններորդ անգամ և այն ժա-
մանակ անկասկած արիւնդ եփ պի-
տի գայ, սիրող պիտի յուզուի,
հոգիդ խռովի և ոտք պիտի ենեւ
ասելով .

«Այո՛, գնանք ուր յեղափոխա-
կանի պարտքն ու կոչումը կը մը-
ղին. գնանք ապրելու և մեռնելու
այնտեղ ուր Մանիշակներ և Նազ-
լուներ արիւն արցունք կուլան.
գնանք սրբելու այդ լուսաշող ա-
շուրներէից թափող արտասուքնե-
րի մարգարտեայ կայլակները» :

Գնա՛ հաստատուն քայլերով Յե-
ղափոխական առաջ՝ անընդհատ,
գնա՛ ուր Մանիշակները կոխու-
ւում են . . . ուր՝ Նազլուները
«վրէժ՝ վրէժ» են գոչում, կրա-
կի մէջը. դէպի հըգհ՛հը, դէպի
հըգհ՛հը . . .

Պսկան Նազարեանց

1898 Նոյ. 12/34

Գահիրէ

ԲՆԱԿԱՆ ՕՐԷՆՔ

(Բաց նախակ Պոս. Հ. Եսաթըմեակի)

Ինքնանախաճուր, ինքնա-
գիտախոսքիւնը կը զարգանայ
եւր մարդ կիսանայ թէ ին-
մածին եւ անծանօթ ոգիներ
չեն, այլ ծանօթ, եւ անփո-
փոխ օրհններ են ինքզինք
կառավարողները :

ՌԱՏԷՆ ՆԱՌԻՋԷՆ

Բնական օրհնները նիւթեն
կամ ընդունեն զուրա չեն,
Լ. ՊԻՒՆԵՐ

Բնական օրհններն անհա-
նգօրէն սրտայայտութիւններն
են իրականութեան :

ՍՕԼԻՏՕՐ

Յարգելի ժողովրդապետ :

Ժողովարանը, եկեղեցին, գոնէ չա-
բաթը ժամ մը լաւարանի վերածել և
հոն հասարակութեան օգտակար նիւ-
թերու վրայ ալ խօսիլ, ամբողջին հաս-
կանալի լեզուով հոն ընկերական, տրն-
սեպական, բարոյական եւ նոյն իսկ
առեւտրական եւ արհեստագիտական
խնդիրներու վրայ ճառել շատ ընդհան-
րացած եւ ընդունուած սովորութիւն

մըն է եւրոպական կարգ մը երկրորնե-
րու, մանաւանդ Սմբերկայի Միացեալ
նահանգներուն համար : Վառնայի ժո-
ղովարանին մէջ քաղցրախառն իմաստա-
սիրութեան գաղափարներն մը հաս-
տատուու ձեռնարկը ինքնին գովելի եւ
օրինակելի գործ մըն է, եւ գուցէ մաս-
նաւորաբար շնորհաւորելի էք անոր
համար որ ազատ երկրի մը մէջ ապրող
մեր կղերականներու քթին տակ սկսած
էք ձեր այդ օգտաշատ գործը, գուցէ
անոնց ալ թափ օրինակ՝ հանդիսանալու
գիտաւորութեամբ : Եւ այդ մի՛ յուսաք,
անոնք՝ իրենց յաւիտենական անշար-
ժութեան եւ անփոփոխելիութեան մէջ
քայլաքայլ, բիրեղացած են եւ վաղուց
է որ կորանցողցած են նորութեանց,
նեղիւյթ կեանքին անողոք պահանջնե-
րուն յարմարելու յատկութիւններն : Յոյ-
սերնիդ միայն ձեր ունեկողմնութեան վրայ
գրէք, ձեր գաղափարութիւններով մի-
այն կրնաք անոնց օգտակար հանդիսա-
նալ՝ եթէ ուզէք : Ձեր առաջին երկու
գաղափարութեանց ներկայ գտնուեցալ
եւ անկեղծ ըլլալու համար կը յայտա-
բարեմ որ ոչ բացատրութեան այդ ե-
ղանակով կարող էք հապախալի ըլլալ,
ոչ ալ այդ ուղղութեամբ օգտակար հան-
դիսանալ :

Ներածական գրած մը յետոյ երկրոր-
դով մը ջանադիր Բնական օրհնի ըս-
ցաւորել որ անշուշտ ձեր յետադիւր
բարոյական իմաստասիրութեան գաղափարն
հիմք պիտի կազմէ : Բնական օրհնը ըս-
ած ատենինս երկու բան մեր մտքին
կը ներկայանայ. ըսիք. բնութիւն եւ
օրէնք : Բնութիւնը ըստ ձեր կարծեաց
անծանօթ եւ անհասկանալի բան մըն է,
զայն ներկայացնող բանն ալ այդ պատ-
ճառաւ հազարու մէկ սխալ իմաստներով
կը գործածուի, գիտունը, կէս գիտու-
նը եւ աղէտը հաւատարմապէս իրենց
ճիշդ թէ անճիշդ կարծիքները բնու-
թիւնով կը միկնեն եւ . . . կը սը-
խալին : Բայց որովհետեւ գուցէ, ըստ
ձեր յայտարարութեան, ճիշտագոյն թիւեր
սիրով, միայն յայտնի իրողութիւնները
քննող մէկն էք եւ կուզէք ձեր գաղա-
փարն հաստատ հիմ մը տալ եւ ծանօթէն
անծանօթը գնալու մէջնորդին հետեւիլ
զանց կրնէք բնութիւնը որ այնքան
անստույգ եւ անծանօթ բան մըն է :
Ձէք ուղի բացատրել թէ ի՞նչ է բը-
նութիւնը եւ թէ ո՞րն է բնութիւն
բանին իսկական նշանակութիւնը : Բը-
նութիւնը կամ նիւթը կ'անարգէք, չէք
ուզիր անոր խօսքը ընել եւ կը կաս-
կածիք ալ թէ արդեօք անիկա գոյու-
թիւն ունի՞, Ձեր զգայաբանքները չեն
խաբեր զեզոք : Եւ ի լրումն ամենեցուն
իրեւ ծանօթ ու բացայայտ էութիւն-
ներ, կամ ձեր խօսքով իրողութիւն-
ներ, օրէնքներու մեղ անծանօթ եւ
անծանաչելի եղող բնութեան կամ նիւ-
թին օրէնքներուն օժիւղէն կը բռնէք,
անոնց ամէն գորութիւն եւ յատկու-
թիւն կուտաք եւ ամէն բան կուզէք
անոնցմով մեկնել : Բնական օրհնքները
ձեզ համար առանց նիւթի եւ գորու-
թեան գոյութիւնի ունեցող էութիւններ
են, կամ լաւ եւս ամէն բանի իշխող,
ամէն բան կառավարող գորութիւններ
են. եւ որովհետեւ մասնաւոր օրէնք-
ները ընդհանուր մեծ օրէնքներէ կը
կառավարուին, ուրեմն ըստ ձեր կարծ-
եաց օրէնքներու գերագոյնը, էութիւն-
ներու էութիւնը, էն, ուրիշ բան չէ
բայց եթէ մեծ օրէնք մը որ միւս բո-
լոր օրէնքներու վրայ կ'իշխէ, զանոնք
բոլորը կ'ընդգրկէ ու կը կառավարէ :
Այս է ձեր գաղափարութեան ամբողջ
իմաստը, եւ ըստ ձեր սահմանի, քանի
որ իմաստասիրութիւնը երեւոյթէն ան-
գին անցնող գիտութիւն մըն է, իրաւ-
ունք ունիք պարծնելու ձեզմարտ փի-
լիսոփայ մը ըլլալուդ քանի որ ձեր

ուղղութեան եւ մէթոտի համեմատ ար-
դարեւ «բնականէն վերջնականը, վեր-
ջնականէն վերջնականը», կամ «էական
էութիւնը, էութեանէն ինքն արծարացաք
եւ երեւոյթէն անցին անցաք հատըն-
տիր յնդարանութիւն մը միայն ձեր
ոտքերուն կռուան ունենալով :

Մեծադարգ պատուելի, ներքեցէք ինձ
ըսել որ ձեր այդ բարոյական իմաստա-
սիրութեան գաղափար ամբողջաբանու-
թեան գաղափար իսկ չունենցաւ : Կը խնդ-
նեմ որ այդ անասի նիւթերու վրայ
ճառել փախաբան ատենները հաճիք յի-
շել որ միջին դարը իւր ամէն ինչ կաշ-
կանողով տօկմաթիղմով վաղուց անցած
է : Եւ որմամբ հոգի չըղատուի վարդա-
պետութիւնը շատոնց մեռած ու թալ-
ուած է այլ եւս չվերականգնանալու
պայմանաւ : Իսկ մէթաֆիզիքը կամ
բնագիտութիւնը գիտական այս դա-
րուս մէջ ինչա՞ւ վարկ չունի : Հօպսէն,
Հիւնէն, Պաքո՞ն եւ Տէքադէն յետոյ
փորձառական եւ քննական իմաստա-
սիրութիւնը ծնած է : «Վարդապետն
ասաց»ը այսօր իւր նշանակութիւնը կոր-
սնցուցած է եւ ամէն բանի վրայ կաս-
կածելու եւ ամէն բան փորձերով հաս-
տատուու ուղղութիւնը տիրած : Գի-
տութիւնները այդ պատճառաւ նոր
թափով մը սկսած են զարգանալ, ու
բնութիւնը աւելի մօտէն եւ աւելի լաւ
կերպով ճանչցնել մարդուն, որպէսզի
անիկա ըստ այնմ իր բարոյական, բն-
կերական եւ այլ կարծիքները կազմէ :
Ուրեմն այժմու եւ ապագային ալ միակ
ընդունելի իմաստասիրութիւնը գիտու-
թիւններու տուած ծանօթութիւններու
վրայ հիմնուած իմաստասիրութիւնն է :
Չկայ մարդկային ծանօթութիւն մը ու-
րու առարկան բնութիւնը չըլլայ կամ
բնութիւնը հիմ չունենայ, իմաստասի-
րութիւնը չը կրնար երբեք այս օրէն-
քին բացառութիւն կազմել : Դարուս
եւ անցնալի ոչ միայն իմաստասիրնե-
րէն այլ նաեւ գիտուններէն, գրագէտ-
ներէն, արուեստագէտներէն անոնք են
մեծ եւ համբաւաւոր եղած որոնք ա-
մենէն աւելի բնութիւնը ճանչցած են
եւ իրենց մտածող միտքն ու գործերը
անոր անփոփոխ ու անայլալ օրէնք-
ներուն յարմարացած են :

Ի. Պիճն

(Եսաթըմեակի)

ԼՐԱՔԱՂ

—Ս. Հոփսիսի մէջ վանքի վերա-
նորոգութեան ժամանակ ներսի
ծիփերը թափելով, ուշադրութեան
արժանի երկու արձանագրութիւն
ներ գտնուած են : Ասոնք ցոյց
կուտան թէ այդ վանք շինուած է
745 թուականին Կոմիտաս կաթո-
ղիկոսին ձեռքը :

—Էլմիածինէն Նոր-Դարի կ'ի-
մացնեն թէ Պոլկարիոյ Սիլիստրէ
քաղաքէն Մաքսուտ Գերձակեան
անուն անձ մը Էլմիածին գացած
է նոյն քաղաքի համար քահանայ
ձեռնադրուելու :

—Պ. Տէր. Աստուածատուրեանց
Եւրեկի բողոքական (Պատ. Ամիր-
խանեանցի հայրենիքէն) ուրիշ բո-
ղոքական քարոզիչի մը հետ խօսք
մէկ ըրած «Եւրեկի սովեալ հայե-
րուն ինչպաստ» ըսելով Ֆիլիւն-
տիոյ մէջ հանդանդութեան ձեռ-
նարկած և խել մը ձեռագործներ
եռագատիկ զինքերով ի վաճառ հա-
նած են : Հայ անունը շահագոր-
ծելու նպատակաւ ֆիլիւնտ. լրագրաց

մէջ այս պատուելիներուն չեկրամը
տեսնող մը կը հետաքրքրուի և կը
հաստատէ թէ Եւրեկի մէջ ոչ քով
կայ և ոչ հոն հայերը կը տան-
ջուին : Ուստի Նոր-Դարին կը զրկէ
այդ չեկրամները պարունակող
ֆիլիւնտական թերթերն ալ, խնդ-
րելով որ խաբերայութիւնը հրա-
պարակուի :

Նոր-Դար իր կողմէն ևս կը
հաստատէ թէ Եւրեկի մէջ սով ու
սովեալ հայեր չի կան, ուստի այդ
բողոքական պատուելիներուն ըրա-
ծը մէկ խօսքով իսպաղողոյքիւն է
կ'ըսէ :

—Թիֆլիսի Առաջնորդ Սեդ-
րաքեան արքեպիսկոպոս իր թե-
մերը շրջիլէ վերջ, արգելած է քա-
հանաներուն տօն օրերը տոնելը
նշխար տանելու և դրամ ժողովե-
լու սովորութիւնը :

Սեդրաքեան սրբազանի այս ար-
գելքը Պոլկարիոյ հայ քահանա-
ներուն ալ շիղին կը դալի :

ՀԱՅԱՍՏԱՆՏԱ
ԵՆՆԻ ՏԵՀԵԾԹ

Պիթիս վիլայէթի տախիլնտէ
կառկառ գաղապարն Ծրկոր նամ
քէօյտէն հոկտեմբ. 6 թարիխի պիւր
մէքթուպ օ՛ ճիվարտան եէնի տէհ-
չէթ խապէրլէրի կէթիմիշ տիւր :

Մէղքիւր մէքթուպ պիւր քէօյ-
լիւնին գալէմիտէն չըգմըշ վէ
խուսուսի օլուպ, գորգու սէպէպի
իլէ, զըրկընըն իսմինի վէրմէ-
յուպտէ «պու թարաֆտա ֆէնա-
խասթալըգ վար. սիլ պու խաս-
թալըղըն նէ օլտըղըն պիւրիսի-
նիլ. ճիվար քէօյլէրտէն 200 քի-
չիտէն զիյատէ թէլէֆիյաթ վար»
տէմէլէ պէրապէր «Յակող վէ
Յոկու նամ իքի քէօյլին էրմէնի-
լէրի իսլամիյէթի գապուլ իթմէկէ
մէճպուր օլտըլար» տէմիշ տիւր :

Ալթիտէքի քէօյլէրին իսիմլէրի-
նի վէ էօլէնլէրին մըգտարը մէք-
թուպտէ շու եօլտա եազըլմըշ տըր :

Առու քէօյտէն	4 քիշի
Թաղու »	5 »
Եղեկիլ »	30 »
Խնձորոտ »	2 »
Հալս »	1 »
Բերկոյի »	3 »
Հարբենց »	6 »
Ծըկոր »	3 »
Որիզ »	2 »

ՖԵՏԱՅԻԼԷՐ

Պունտան պիւր գալ հաֆթա մու-
գատէմ եազմըշ օլտըղըմըգ իւզըլէ,
Պիթիս վիլայէթի տախիլնտէ
խաթ գաղապարտա 8-10 բարէ
էրմէնի քէօյլէրի Գիւրալէր վէ աւ-
քէլէր թարաֆընտան խարապ օլ-
մըղլար ըտը. Թիւրք հիւքիւմէթի
պու վահշիլիքլէրէ սէպէպ խարիճ-
տէն կէլէն էրմէնի ֆէտայիլէրինի
կէօթէրմիշ իտի. Պու պէհանէ
իլէ հիւքիւմէթ տէմէք իսթէր իտի

քի, հէր հանկը գազատա ֆէտա-
յիլէր կէօրինիւր իսէ, օ՛ գազա-
նըն, էրմէնի քէօյլէրինի խարապ
իթմէկէ վէ էհալինին պիր թագը-
մընը գըրուպ, պիր թագըմընը
մահպուսարտա չիւրիւթմէկէ հագ-
գըմըզ վար տըր: Թիւրք հիւքիւ-
մէթի քէնտի ճիւրմինի պու հօյլէ
իթիւրաֆ իթտիի հալտէ, պիր
պիւթիւն գազայը խարապ իթ-
տիքտէն տօլայը վիճտանը բէք
րահաթ օլտըղընը տախի իսպաթ
իտէյօր, նէ՛ ատիլ հիւքիւմէթ վէ
նէ՛ կիւզէլ իսլահաթ: Միւճըրմի,
գապահաթըլը պուլամատըղը վէ
հախօտ էլէ կէչիւրմէթի հալտէ,
մասուն վէ պիկիւնահարը ճէղա-
լամագ:

Շիմտի կէլէլիմ պիզիմ ֆէտայի-
լէրէ: «Դիօշակըն սօն նուսխէ-
սինտէ տէրճ օլընան պիր մէթիւպ
մունթաղամ պիր ֆէտայի չէթէսի-
նին սեպտեմբըր 3-տէ Բագրեանդ
գազասընա կիրմիշ օլտըղընը թաֆ-
սիւլաթլէ պիւթիւրմիշ տիր, չէօյլէքի:
Ֆէտայիլէր Մօսկի թիւֆէքլէր
վէ գըլըճլարլէ սիւհալանմը թու-
սիա սինօրլարտուն իչէրի կիրուպ,
Քէօշկ տաղը էթէյինտէ տիկնէն,
մէքտէ իքէն թիւրքլէրտէն տույու-
լարագ համիտիյէ սիւվարիլէրին
հիւճուճընա գարշը չէտիտ պիր
մուգաթմէթտէ պուլընըլար, պու
ճէնկտէ համիտիլէր մաղուպ օ-
լարագ պիր թագըմ թէլէֆիյաթ
վէրտիքտէն սօնրա կէրի չէթիւր-
լէր:

Ֆազաթ, ֆէտայիլէրին կէլմիշ
օլտըղընը խապէրի հէր թարաֆա
հայըլարագ, բիւրտ աշիրէթլէր,
պաշըպօղուգլար, ասքէրլէր թէք-
րար մէքթիւր տաղըն էթէյինտէ
թօրլանըլար: Ֆէտայիլէր պիր
թէրէ իւզէրինտէ մէվզը թուլմը
օլմաղլէ չէտիտ պիր գալկա եէնի-
տէն պաշար վէ ազաւա գատար
տէվամ իտէր: Ֆէտայիլէր տիւշ-
մանլարտան պիր թագըմընը գու-
պան իտուպ, քէնտիլէրինտէն պիր
քիմսէ թէլէֆ օլմագսըղըն, գա-
րանլըզ պաստըգտան սօնրա թէ-
բէնին արգա թարաֆընտան տիւշ-
մանա կէօրինմէքսիլին չէթիւր-
լէր վէ իլէրիյէ տօղրու հօլլարընա
տէվամ իտէրլէր: Իքի սաաթ հօլ
հիւրիւտիքտէն սօնրա, աճլըզ վէ
հօրկուշլըզ սէպէպի իլէ պիր մա-
հէլտէ թէքրար օթուրուլար:

Քիւրտլէր իսէ ֆէտայիլէրի թա-
ադիպ իթմէքտէ օլուպ, թէսա-
տիւֆէն անլարը եինէ պուլուրլար:
վէ պու տէֆա գարանլըզ օլմագ
մինասիպէթի իլէ գուճագ գուճա-
ղա կէլիւրլէր, գալկա պըշաղլար
վէ գըլըճլար իլէ պաշար, բէք տէհ-
չէթլի սուրէթտէ սաաթլարճա տէ-
վամ իտէր, ֆէտայիլէր գարշը-
լարընա կէլէնի վուրուպ, լաշէլէ-
րին իւզէրինտէն աթլալարագ ի-
լէրիյէ կէչէր վէ Գաթաթինա տա-
ղընա գատար իլէրլէրլէր: Քիւրա-
լէր տախի պրագուպ կիտէրլէր:
օլ կիճէ ֆէտայիլէրտէն 8 քիշի
թէլէֆ օլուր:

Պու եէնի մէվզըտա սու պու-
լուրլար իսէտէ, իքի կիւնտէն պէ-
րու աճ գալմըշ օլտըղլարընտան,
ֆէտայիլէր իքի պէօլիւկէ թապ-
սիմ օլուպ, պիրի էքմէք կէթիւ-
մէք իչիւն հագըն պիր քէօյլէ կի-
տէր վէ տիկէրի մէվզը թուլթմագ
իչիւն տաղըն հիւքսէքլէրինէ չը-
գար: Ֆազաթ քէօյլէ կիտէլէր
թէքրար գալկայա թուլթուլու-
լար վէ էքմէք ալմայա վագըթ
պուլամայուպ տաղըլըլար: Տաղ-
տա գալմըշ օլան պէօլիւք տախի
Հասնանը աշիրէթին սիւվարիլէրի
իլէ ճէնկէլիւրլէր: ուլգուսըզ, աճ
վէ հօրկուշ հալլէրի իլէ ազաւա
գատար գահրամանէնէ մուգաթ-
մէթ իտէրլէր վէ տիւշման կէրի
չէթիւմէկէ մէճպուր օլուր: պու
գալկատա 6 ֆէտայի տախի էօլ-
միւշ:

Կիճէ ֆէտայիլէր տախի պու-
մէվզըլարընը եինէ թէրքլէ սէ-
քիլէր քիշի թագսիմ օլուրագ հօլ-
լարընա տէվամ իտէրլէր: Նիհայէթ
պաղը գալկալարտան սօնրա 25
քիշի օլուրագ խալթ գազասընտա
Փրիսուս նամ քէօյլէ վասըլ օլուր-
լար: Պուշլարըն տրգաթընտան պիր
պէօլիւք նիգամի ասքէր հէթիլիւր,
վէ թէմամ պիր կիւն գալկայա
թուլթուլուլար: պու տէֆա տախի
պիր թագըմ ասքէր, պիր հիւշ-
պաշը թիւրքլէրտէն՝ վէ պիր քիշի
ֆէտայիլէրտէն էօլիւրլէր: Գարան-
լըզ պաստըգտան սօնրա թիւրքլէր
չէթիւրլէր վէ ֆէտայիլէր զայը
զայպ ու նապէտիտ օլուրլար:

Իշթէ խալթ գազասընըն խա-
րապիլէթի օ՛ կիւնտէն պաշլար:
պիւթիւն քէօյլէր վիրանէ օլուր,
գալկալը էրմէնի քէօյլիւր մալ-
լարընը միւլքէրինի պրագուպ էօ-
լէյէ պէրիյէ գաշարլար վէ պիւ-
թիւն պիր գալա սէֆալէթէ տիւ-
շար օլուր:

Չունքի գահրաման ասքէրլէր
վէ գալթիլէր վէ գալթը շահա-
նէնին խաա էվլատլարը օլան Հա-
միտիյէ սիւվարիլէրի ասըլ միւճ-
րիմլէրի պուլամայուպ ինթիգամ-
լարընը սէֆիլ վէ սիւհալը քէօյլիւ-
էրմէնիլէրտէն ալըլար:

Նէ՛ ատալէթ վէ նէ՛ գահրա-
մանլըզ:

Կ Ի Ր Ի Տ

Բուսիա, ինկիլթէրա, Ֆրանսա
վէ իթալիա էլիւրլէրի ալտըղլարը
թալիմաթ իւզլէր Գիկտիւրմ: Տտէն
իթիպարէն կիրիտ ատասընտան
մուհասէրէ գալգաճաղընը Պապը
Ալիյէ րէսմէն պիւթիւրիլէր:

— Ֆրանսըլ ամիրալըն վարօրը
վէ տիկէր տէվլէթլէրտէն տախի
պիրէր վարօր Բրէնս Եօրկիի պու-
լուպ, Կիրիտէ կէթիւմէք իչիւն
հօլա չըգալար:

— Իթալիանըն մէճիսի մէպու-
սանը կիրիտէ էօտիւնճ վէրիլէճէք

օլան պիր միլիօն ֆրանգըն վէրիւ-
մէսիւնի էքսէրիյէթլէ գապուլ իթ-
տի: Պու մինասիպէթլէ ամիրալ
Գանէվարօ պիր նուլթ սէօյլէ-
յուպ, Բրէնս Եօրկիին թայի-
նինտէն վէ սայիր կիրիտ իլլէրին-
տէն տօլայը հուսուլա կէլէն ֆի-
թուհաթ Բուսիայա մախսուս օլ-
մայուպ, իլլա տէօրթ տէվլէթտէն
թէնսիպ օլընան մէտէնիլէթին ֆի-
թուհաթ տըր, տէտի:

Բրէնս Եօրկիի Բուսիա թէքլիֆ
իթտի, ֆազաթ տիկէր տէվլէթ-
լէրտէ անը միւնասիպ կէօրիւպ
գապուլ իթտիլէր տէտի: Ամիրալ
սէօլիւնիւ իթթիֆագը միւսէլլէ-
սէյէ ալթի իտէլէք, իթալիա
քէնտի միւլթթէֆիլէրի իլէ իթ-
թիֆագընը վէ միւնասէպաթը սէ-
միւնասիւնի տէվամ իթմէքտէ տիր,
տէտի:

Կիրիտտէն թիւրքիայա կիրէ-
ճէք մալլէր իչիւն 100 տէ 8 կէօմ-
րիւք ալընմասընը Պապը Ալի էմիր
իթմիշ:

Թիւրք հիւքիւմէթի պու գա-
րարը իլէ կիրիտի պիւթիւն պիւ-
թիւնէ մէմալիքի օսմանիլէտէնայը
ճէնէպի պիր էյալէթի ատտ իթմիշ
օլըյօր:

Սթանպուլ էլիւրլէրի Պապը Ալի-
նին պա գարարընա գարշը բրօ-
թէսթ իթմիշլէր:

Մ Ի Թ Ե Ն Ե Վ Վ Ի Ե

— Կէչէն հաֆթա Բարիստէ կը-
ռան Օսլէան սալօնընտա Բիգա-
րըն լէհինտէ թէճէմիւ իտէն մի-
թինկտէն սօնրա պու տէֆա տա-
խի Եահուտիլէրէ վէ Բիգարա
գարշը պէօյիւք պիր միլիոն թօր-
լանմը վէ Եահուտիլէր ալէյհինէ
բէք չօգ նուլթլար իրաւ օլընա-
րագ, էհալի ճիւմհուլլէ նիւմայիշ-
լէր իթմիշ վէ «էօլսիւն Բիգար»,
տիւշսիւն Եահուտիլէր» տէյուպ-
ղըմըշ:

— Բատիգալ նամ կաղէթանըն
գանընա պինտէն, մահքէմէի
թէմիկտէ Տրէյֆիւս տալասընըն
թէտըգընտան անլաշլաճագ քի
հարպիյէ նէգարէթինին պաղը էվ-
րագ ախէրէ թէսիմ իտէն Հանրի
իմիշ: Ղիրա թէլէֆի նէֆա իտէն
պու առէմ 8000 ֆրանգ մաաշը
օլտըղը հալտէ 30000 ֆրանգ մէ
սարիֆ իտէր իմիշ:

— Մ. Ամէրիգա Չին մէմալիքին-
տէ տիկէր պէօյիւք տէվլէթլէրին
էլտէ իթմիշ օլտըղլարը իթթիպաղ-
լարըն թըպըսընը քէնտիսի իչիւն
տախի իտտաա իթմէքտէ տիր:

Քէզա Ամէրիգա գուլվէի ա-
քէրիյէսիւնի արթըրմագտան մաա-
տա եէնիտէն հարպ վարօրլարը
հարտըրմագտա տըր:

Отговорникъ М. Сконовъ
Печатница «Взаимость»—Варна



Първо печално тегление
тоже на 10 й Декемврий т. г.

Първа Българска-Класна-Лотария

ОСНОВЪ БРАЙЕРЪ & С, ГЛАВНИ КОЛЛЕКТОРИ.

ГЛАВНИ ПЕЧАЛБИ т. е: 500,000, 300,000, 200,000, 100,000, 50,000, и проч.

РУССЕ, ПЛОЩАДЪ ЦАРЬ БОРИСЪ.
ТЕЛЕФОНЪ № 43

АДРЕСЪ ЗА ТЕЛЕГРАМИ БРАЙЕРБАНКЪ

СОФИЯ, ТЪРГОВСКА УЛИЦА № 4
ТЕЛЕФОНЪ № 43

До когато се намира въ депо	
Цъли лозове злат. лева 10.—	
Половини, " " 5.—	
Четвърти, " " 2.50	
Една осма, " " 1.25	